

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

19 փետրվարի 2021թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|-----------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 7. Իգոր Մկրտումյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 8. Լիաննա Գալստյան |
| 3. Աննա Կարախանյան | 9. Կոյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերդյան | 10. Միսակ Խաչատրյան |
| 5. Արման Ներսիսյան | 11. Քրիստինա Հակոբյան |
| 6. Գրիգորի Սադյան | |

Նիստին ներկա էին կազմակերպության անդամներ Վեսմիրա Հարությունյանը և Նարինե Դերձակյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության համաժողովի ժողով գումարելու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության համաժողովի ժողով գումարելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ սույն թվականի մարտի 13-ին լրանում է կազմակերպության խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի անդամների լիազորությունների ժամկետը և անհրաժեշտ է գումարել կազմակերպության համաժողովի ժողով նոր ընտրություններ անցկացնելու նպատակով:

Քննարկման ընթացքում նիստի մասնակիցներն անդրադարձան ժողովի անցկացման ժամանակի, եղանակի, օրակարգի նախագծի հետ կապված հարցերին: Քննարկվեց նաև հաշվիչ հանձնաժողով ստեղծելու նպատակահարմարության հարցը:

Կազմակերպության խորհրդի նախագահին առաջարկվեց դիտարկել կազմակերպության անդամների և առաջադրված թեկնածուների միջև հանդիպում կազմակերպելու նպատակահարմարությունը:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝


Որոշում՝ 1. 2021 թվականի մարտի 10-ին ժամը 09:00-ին (ժողովի բացման ժամկետ) գումարել Կազմակերպության համաժողովի ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով.

1) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի անդամների թվաքանակը սահմանելու մասին,

- 2) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհրդի անդամներ ընտրելու մասին,
 - 3) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի անդամներ ընտրելու մասին:
2. Սահմանել, որ ժողովն անցկացվում է հեռակա կարգով՝ «Electionbuddy» էլեկտրոնային համակարգով՝ մինչև 2021 թվականի մարտի 12-ը ժամը 21:00-ն (ժողովի փակման ժամկետ):
3. Առաջարկել Կազմակերպության համաժողովին՝
- 1) ժողովի նախագահող ընտրել Կազմակերպության խորհրդի նախագահ Բգոր Մկրտումյանին,
 - 2) ժողովի քարտուղար ընտրել Կազմակերպության խորհրդի անդամ Քրիստինա Հակոբյանին,
 - 3) սահմանել, որ Կազմակերպության խորհուրդը կազմված է 17 անդամից:

Նիստի նախագահող՝

Նիստի քարտուղար՝



Բգոր Մկրտումյան

Քրիստինա Հակոբյան